

## ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՂՕԹՔԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յոյժ զօրաւոր են աղօթք յարդա-  
րոց օգնականութիւն.  
(Յակոբոս Ե. 16):

Ե՛ղբարբ, պատահած է ձեզ ճանապարհորդութեան ժամանակ  
կանգ առնել մի Հին շինութեան ավերակների մէջ՝ և ձեր մտքի  
առաջ բերել այդ ավերեալ շինութեան անցեալը, կորուստը: Եթէ  
որ շրջապատող ավերակների քարերը տաճարի քարեր են՝ և նո-  
րանց մէջ սեղանի մնացորդներ են երևում,—արդեօք դուք Հո-  
գեկան մի առանձին յուզմունք չէ՞ք զգացել՝ մտաբերելով այն ա-  
մեն մարդկային սերունդները, որոնք գտնուել են շատ անգամ  
այդ տաճարի մէջ, այնտեղ ճառել և աղօթել են: Զէ՞ք ի յուշ ա-  
ծել այն արտասուքները, որոնք այդ գետինը ոռոգել են: Եւ առհասա-  
րակ այն ամենը, ինչ որ մարդկային վշտերի և հոգեկան ձգտում-  
ների ամփոփումն կամ կեդրոնն էր այդ մի կտոր գետնի վրայ և  
այդ պատերի մէջ, որոնցից այժմ ոչինչ չէ մնացել:

Մի այդպիսի տեսարան ես տեսնում եմ եւ բարոյական աշխար-  
հում: Այնտեղ մենք նոյնպէս տեսնում ենք ավերակներ, տխուր  
ավերակներ, որոց ամենայն տարի առաջ է բերում մեղքը, յան-  
ցանքը,—ավերակներ հոգիների, որոնք ստեղծուած են բարձր և  
վսեմ կեանքի համար և որոնք ստորացել, ընկել են իրանց սնա-  
փառութեամբ, իրանց եսականութեամբ և ազահութեամբ: Իայց  
ուշադրութեամբ պտուեցէք և մեղքի ու անհաւատութեան թանձր  
փաթոյթի տակ՝ դուք կը գտնէք տաճարի հետքեր, կը տեսնէք և կը  
ճանաչէք այն նշաններն, որոնք ձեզ կասեն թէ այդ հոգիները պէտք  
էր որ Աստուծոն պատկանէին:—Վայր ի վերոյ և միակողմանի գը-  
լուխներ, որոնք զանազան սխտեմներ են սահմանել և մարդկութիւնը

իրանց նեղ աշխարհայեցութեանը հաւասարեցրել, — միմիայն այսպիսի գլուխները չեն կարող իմ յիշած հետքերը նշմարել: — Բայց նրանք իրանց սխտեմաներից աւելի և երկար կապրեն և նորից յառաջ կը խազան, որպէս վիաներ մեր սկզբնական ծագման և մեր իսկական նշանակութեան: — Յիշածս հետքերից ես այսօր միմիայն մէկի վրայ եմ ուզում մատնանիշ լինել: — Դա աղօթելու ձգտումն է, որ ամեն մի մարդկային հոգւոյ խորքումը բռն է դրել, որ յատուկ է մարդուն ամեն ժամանակ և ամեն տեղ, որ ստիպում է հազիւ հազ մարդկային լեզու ունեցող վայրենիներին, վշտի ժամանակ, իրանց անմիտ երեսը դէպի երկինք ուղղել և որ մեր լուսաւորուած ցեղերի մէջ սկեպտականութեան բոլոր յարձակումներին դիմադրելով՝ հարկադրում է անհաւատ հօրը՝ ի ծունր խոնարհել իւր զաւակի մահուան անկողնի առաջ: —

Ո՛րքան զօրեղ է այս ձգտումը և ի՛նչպէս չգարմանալ նրա գեղեցկութեամբն ու վսեմութեամբ: — Ահա ձեզ մի թոյլ և ոչինչ չիմացող էակ, որ ամեն բոպէ կարող է իչիք դառնալ, ոչնչանալ, ի վերայ այսր ամենայնի՝ աղօթքը նրան ամենակարող Աստուծոյ հետ է միացնում — ամեն մի կեանքի և ամեն մի իմաստութեան Ստեղծողի հետ: Ահա քեզ մի մարդ, որ մինչև հիմայ եսականութեամբ և մեղքերով ապականուած էր, մինչդեռ, աղօթքի միջոցաւ, նա Ստեղծողին է դառնում՝ դողդոջաբլին — նրան, որ աղբիւրն է բարձրագոյն սիրոյ և սրբութեան: Եւ աղօթքի միջոցաւ այդ մարդը իւր հոգու մէջ անդրադարձնում, ցոլացնում է Աստուծոյ կարողութիւնն և անսահման բարութիւնը՝ իւր բարի գործերում գտնելով այն առանձին կեանքն, որ Աստուծուցն էր ստացել ի սկզբանէ անտի: Ո՛նց դուք զարմանում էք այն լուին և հզօր օրէնքի վերայ, որ ձգողական ոյժի գօրութեամբ՝ միացնում է աշխարհներ և որ իրան զգալի է կացուցանում ամեն մի աննշան և անտեսանելի հիւլէի դուք հիանում էք այն ծածուկ ոյժի վրայ, որ թելի վրայ մէկ ակնթարթում հազարաւոր վերստ տեղ՝ փոխանցում է ձեր՝ ձեռքի ցնցումով արտայայտած միտքը և դուք չէք զգում այն վսեմ, հրաշալի և աստուածային ոյժը, որ պարունակում է իւր մէջ աղօթելու ձգտումը, — ձգտում որով հոգին ազատօրէն դառնում է դէպի բոլոր կենաց

Եղբււրը, միանում է նորա հետ՝ երկիւղածութեամբ խոստովանելով, որ ինքը (Հոգին) ամեն ինչ Աստուծուց է ստացած, ուստի և պատրաստ է ամեն ինչ էլ նորան նուիրել:—

Սակայն զննելով աղօթելու այս զարմանալի ձգտումը, շատ ցաւալի է տեսնել թէ ո՞ր աստիճան մենք նրան թիւրել ենք: Ի՞նչ է դարձել աղօթքը գրեթէ ամեն տեղ:—Արտաքին մի ծէս, կրօնային մի սովորութիւն, ուրիշ ոչինչ: Աղօթքի ոգին անհետացել է, մնացել է միմիայն ձևը: Նայեցէք բուդդայականի վրայ, որ իւր համրիչի գնդակները ձգելով մի և նոյն բառերը կրկնում է անդադար մինչև յոգնելը, մինչդեռ նրա Հոգին միանգամայն անմասն է և բթացած:—Ո՞ւր է այստեղ ոգևորութիւն, ո՞ւր է սէր, ո՞ւր է զԱստուած որդնող Հոգի, ո՞ւր է, վերջապէս, աղօթքը:

Եւ կամ նայեցէք, օրինակի համար, ձափոնացու վրայ, որ նստած է իւր աղօթելու մատռան,—ջրաղացի,—առաջ, որ ինքն է շինել: Քամին շարժում է ջրաղացի թւերը և լիսեռի (առանցք) վրայ փաթաթվում են մագաղաթի կտորներ, որոնց վրայնա իւր լինդրուածք ու ցանկութիւններն է գրել:—Եթէ քամին յաջող է, ձափոնացին հարկւր և հազար անգամ կրկնում է իւր աղօթքը, որով յոյս ունի աստուածների ողորմութեանը արժանանալ: Այս բանի վրայ դուք ծիծաղում էք՝ այնպէս չէ: Սակայն, ո՞հ, ի՞նչ ենք տեսնում մենք մեր սեպհական երկիրներում:—Ջնայած Յիսուսի Բրիստոսի այն դրական պատուէրին, որով արգելուած է զապառօտութիւնը աղօթքի ժամանակ, միթէ մեզանում ևս մի և նոյն աղօթքի կրկնողութեանը փըրկարար արժէք չեն վերագրում:

Իայց այս դեռ քիչ է, դեռ աւելի հեռուն են գնում և աղօթքից,—Հոգեկան այս արտագեղմունքից, զըջման և սիրոյ այս ուժգին բղխմունքից՝ շինում են միմիայն ապաշխարութեան մի գործողութիւն, մի արձանագրութիւն, որ ի դէպ և յանդէպ, կազմում են, կարծելով որ աղօթքի լոկ արտաքին լիազուածք և հիւսուածքը փոխաբերում է ներքին և առ ի սրտէ ուղղութիւնը: Յիւրաքանչեւ, կարծում են թէ դա Աստուծոյ հաճոյն է, թէ՛ կարելի է քսան իւր մեղքերը և փրկել իւր Հոգին՝ ամենայն օր: յիշուէ՛ր կամ հարիւր անգամ, կրկնելով որ և է աղօթք, որոյ մէջ Հոգին չէ մասնակցում:

Կրօնային կեանքի ցաւալի՝ յեղաշրջումն:

Արդեօք ո՞ր Հայրը կանչելով որդւոյն իւր մօտ՝ կրսկսի իւր սէրը արտայայտել նրան անգիր արած և հարիւր անգամ կրկնուած բառերով:—Այն ո՞ր Հայրն է, որ սիրոյ այդ տեսակ արտայայտութեանը՝ նախապատիւ չէ համարում մի քանի, թէկուզ միմիայն մի խօսք ասել, բաւական է որ այդ խօսքը սիրող և իսկապէս շարժուած սրբորդ բղիւսած լինի: Այս ամենից յետոյ էլ ի՞նչ դաշափար կարելի է կազմել ամենազէտ Աստուծոյ մասին, որ ամեն մի ծածուկ բան դիտէ, եթէ որ շրթունքների թոթովանքով և լոկ ձեւական ծնրադրութեամբ ուզում են գրաւել նորան:

Բայց իմ այսօրուայ խօսքը մեր այդ մոլորութեանց մասին չէ, եղբայրք: Մենք բոլորս ընդունում ենք, որ աղօթքը Հոգեկան մի գործողութիւն է, աւելին ասենք՝ աղօթքը Հոգւոյ զրուցատարութիւնն է Աստուծոյ հետ: Առ այժմ ես չեմ խօսում այն բանի վրայ՝ թէ այդ զրուցատրութիւնը ի՞նչ բանի համար պէտք է լինի, այլ նախադասում եմ ցոյց տալ ձեզ մարդու Հոգին, որ Ս. Հոգւոյն ազդեցութեամբ զարթնելով և զգալով իւր կարօտութիւնը՝ Աստուածային ողորմութեանն է դիմում և ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, թողութիւն ստանում:—Թողութիւն որ նա տուեց աշխարհին՝ առաջին անգամ պատուիրելով Աստուծոյն մեր Հայրը անուանել: Ես նախադաս եմ համարում ցոյց տալ ձեզ երախտագիտութեան, երկիւղածութեան և մանկական աներկեան վստահութեան այն զգացմունքները, որով պէտք է լցուած լինի քրիստոնէի Հոգին՝ փրկուած և Աստուծոյ առաջ դէմ յանդիման կանգնած: Իմ այսօրուայ խօսքը ինձ տանում է դէպ ի մի այլ հարց, այն է թէ՛ աղօթքը ազդում, ներգործում է արդեօք: Եւ հէնց այս կէտի վրայ եմ հրաւիրում ես ձեր բոլոր ուշադրութիւնը:

Ներգործում է արդեօք աղօթքը: Զարմանալի հարց՝ կասեիք հիմա՞յ դուք ինձ: Եթէ որ աղօթելը մի անօգուտ դժուարութիւն է՝ հապա էլ ի՞նչ հարկ կայ աղօթելու: Սա, ինքն ըստ ինքեան, շատ պարզ է, այո՛: Այնու ամենայնիւ հարկաւոր է նրան պարզաբանել: Ամեն ոք էլ ընդունում է, որ աղօթքը ներգործում է, բայց ո՞ւր վրայ է ներգործում: Արդեօք մեզ վրայ միմիայն, — ահա թէ հարցը ինչո՞ւմն է:

Աղօթքի մասին շատերը կարող են պերճախօսութեամբ և հիացմամբ ճառել: Կարող են ասել, թէ աղօթքը վեմացնում, արբում, մաքրում է: Բայց ի՞նչպէս և ինչի՞ նախ և առաջ նրա համար, կը պատասխանեն մեզ, որ աղօթքը հոգեկան մի մարդութիւն է, որ աղօթքը մեզ Աստուծոյ հետ է միացնում, թէ նա մեր հոգին հեռացնում է ամեն մի անձնաւոր, ունայն, ապականացու և մեղսակիր գործերից: Եւ հէնց այդ տեսակ նորոգեալ հոգու մէջ՝ Աստուծոյ պատկերը լաւ է արտափայլում: Այս ամենը, ի հարկէ, ճշմարիտ է: Բայց ամեն բան հէնց միայն դրա մէջն է արդեօք:—Ո՛չ, քաւ լիցի:—Տեսնենք, արդեօք աղօթքը մի պահանջ ևս չէ, որ պատասխանի է սպասում: Արդեօք աղօթքը չէ ներգործում նոյն ինքն Աստուծոյ ողորմածութեան վրայ. և չէ՞ կարող միթէ դէպքերն և իրերի ընթացքն ևս փոփոխել: Այստեղ անպայման հաւատ, աներկբայութիւն է մեզ հարկաւոր, որովհետեւ մեր քրիստոնէական կեանքի էութիւնը հէնց դրա մէջն է:—Այստեղ մենք պէտք է համոզուած լինենք, որ աղօթելով մենք մտացածին պատրանքների զոհ չենք լինում:—Եւ յիշաւի, մեզ ասում են, և դուք ինքեանքդ էլ լսած կը լինիք, թէ մեր կողմից մանկական թեթեամտութիւն և անձնավրատահութիւն է կարծել, թէ, ի հետեւումն մեր աղօթքին, Աստուծոյ սահմանած կարգերը կարող են փոփոխուել: Եւ թէ՛ այն աղօթքն է միայն արժանի այդ անուան, որ պահանջող բնաւորութիւն չունի. այլ բաւականանում է Հնազանդութեամբ և այն դիտակցութեամբ թէ ինքը (աղօթքը) կարող չէ արտաքին դէպքերը փոփոխել: Վասն զի դա կը նշանակէր Աստուծոյ կամաց փոփոխուիլը ցանկանալ: Եւ թէ՛ աղօթքի միակ նպատակն է նախապատրաստել մեզ ընդունել այն, ինչ որ կայ: Ահա, եղբարք, այն միտքը, որ ես ուզում եմ քննել կարելին պարզութեամբ: Եւ կարծում եմ, որ այդ քննութիւնը մեզ ամենքիս հարկաւոր է: Վասն զի այդ միտքը, կարելի է, երբեմն մեզ շփոթել է, մեր ոգևորութիւնը թուլացրել է և մեր հաւատը սառեցրել:

—Ճշմարիտ է թէ ոչ այս միտքը: Այս հարցման միայն մէկ պատասխան պէտք է լինի:—Թո՛ղ Տէր Աստուածը օգնէ մեզ այդ պատասխանը տալու համար:—

Այսպէս ուրեմն՝ ահա թէ ինչ բանն է մեզ նախ և առաջ ապ-  
շեցնուում: Եթէ որ աղօթքը կարող է և պէտք է ներդրածէ միմիայն  
աղօթողի վրայ,—այն ժամանակ ի՞նչ նպատակաւ մենք աղօթում  
ենք եւ ուրիշներէ համար:—Երբոր դուք աղօթում էք մի Հոգու  
համար, որ ձեզ համար թանգ է, երբոր դուք խնդրում էք Աս-  
տուածանից պահպանել այն մարդու կեանքը, որ ձեզ համար ա-  
ւելի սիրելի է քան ձեր սեպհականը,—այն ժամանակ ձեր աղօթ-  
քով դուք պէտք է բաւականանաք այնու, որ սիրով տանիք այն  
ամենը, ինչ որ նախասահմանուած է և պէտք է կատարուի: Բայց  
եթէ ես իմ աղօթքով ուրիշի վրայ ներդրածել չեմ կարող, եթէ  
որ նրա վիճակի մէջ ոչինչ բան փոփոխել չեմ կարող,—յայն դէ-  
պքս, ճշմարտն եմ ապում ձեզ, ինձ համար պարզ չէ, թէ ինչի՞  
ուրեմն ես պէտք է աղօթեմ ուրիշի համար: Եթէ որ միջնորդու-  
թիւնը անկարելի բան է, ապա ուրեմն նա լոկ կրօնային մի ցը-  
նորք է: Վասն զի միջնորդելով այլոց համար՝ ես իմ օգտի համար  
միայն աշխատած կը լինիմ, իմ ներքին հանգստութեան համար  
միմիայն:—

Եւ հետեւաբար այս դէպքում միջնորդութեան նպատակը կը լի-  
նի իմ անձնական ետականութիւնն և եթէ: Որովհետեւ իմ բոլոր  
ջանք ու եռանդը վերաբերում են իմ անձնական երջանկու-  
թեանն և եթէ:

Այժմ ես դառնում եմ մարդկային Հոգու անբռնազբոս ձրգտ-  
ման այն ըուպէին, որ դէպի աղօթքն է մղում նրան: Ես նրան  
չեմ դիմում այն ժամանակ՝ երբ նա դատում կամ խորհրդա-  
ծում է, այլ երբ ազատ և անկախօրէն աղօթում է, առանց այդ  
աղօթքի հետեւանքների մասին խորհրդածելու: Այդ ժամանակ նա  
ի՞նչ է ցանկանում արդեօք: Միթէ միայն այն, որ վերասլանայ  
առ Աստուած, միանայ ամեն բարեաց Սղբիւրի՝ Հետ, յանդորրի՞  
և խաղաղի՞ ընդհանուր կարգ ու կանոնի պատկերացումմբ և  
սովորի հնազանդել անողոք անհրաժեշտութեան,—արդեօք այս  
միմիայն:—

Բայց ո՞վ կը համարձակի պնդել և հաստատել այս բանը, առանց  
ճշմարտութեան դէմ մեղանչած լինելու:

Թիժէ այս ընկղմեալն, որ տագնապալից ակնկալութեամբ իւր աչքերը դէպ ի Աստուած է ուղղում, միժէ այս մայրը, որոյ սիրտը ճմլւում է՝ տեսնելով իւր զաւակը մահուան տագնապում և որ դուրս է իւր աչքի առաջ բերելով զաւակի կեանքին սպառնացող փորձութիւնը, միժէ այս հայրը, որ սոսկմամբ տեսնում է և գիտէ՝ որ իւր ընտանիքի վաղուեան հացը չունի, միժէ այս մեղաւոր մարդն, որ զգում է թէ չարը որսում է նրան և կարող է մինչև յիմարութեան հասցնել, — մի խօսքով՝ միժէ այս բոլոր էակները, որոնք աղօթում են, ինչպէս աղօթել են ցարդ և պիտի աղօթեն այսուհետև ևս, միժէ, ձեր կարծիքով, սրանք մի բան չեն խնդրում և ջերմ ու խորին կերպով չեն համոզուած, որ կարող են Աստուծոյ գութը շարժել և իրերի ընթացքը փոխել:

Դուք, ի հարկէ, չեք վստահանում այս բանը մեր ժել: Այլ ստիպուած էք, գուցէ, պնդել, որ այդ բոլոր էակները՝ ամբարհաւած մոլորութեան զոհեր են: Մոլորութիւն. բայց սակայն ո՞րտեղից դուրս եկաւ այս մոլորութիւնը, որ ամեն տեղ և ամենքի մէջ մենք տեսնում ենք, որ կարելի չէ մարդկային հոգու խորքում տնկել և աճեցնել ոչ կրթութեամբ, ոչ ազդեցութեամբ և ոչ օրինակներով և որ, այնու ամենայնիւ, ամեն ժամանակ և ամեն մարդու մէջ՝ վճռական ըոպէներում երևան է գալիս: —

Այս կը նշանակէր թէ՛ այս ձգտումը մեր մէջ դնող Աստուածը մի այնպիսի Աստուած է, որ մեր հոգուն մէջ սահմանել է քաղց՝ առանց կերակրի, ծարաւ՝ առանց զովացման, — Աստուած, որ իւր արարածին արեւիս լինի՝ «դու միշտ պէտք է հարցնես, իսկ ես բնաւ չպէտք է պատասխանեմ քեզ»: —

Ո՛չ, բնաւ ոչ, ես արեւի շուտ հոգու այս պարզ և անմիջական վկայութեանը կը հաւատամ, քան բռնադատեալ սխտեմի: — Կամ մտացածին ցնորք անուանելն այս հոգեկան խորին և ընդհանուր զգացմունքը և կամ այլապէս նրա միտքը և, հակառակ բնութեան, յեղաշրջելն նրա իսկական բնաւորութիւնը: Ես այդ սխտեմը բաց է իբաց, մերժում եմ և ընդունում ու հաւատում այն զգացմունքին, որ երբէք չէ ջնջւում ու անհետանում մարդու մէջ: — Բաց յայդմանէ՛ մենք — քրիստոնեաներս՝ ինչ լաւ և վսեմ բան որ

Աստուծոյ մասին գիտենք, — այդ ամենը մեզ Յիսուս Քրիստոսն է սովորեցրել: Քրիստոսն է մեզ ցոյց տուել սէր և մերձաւորութիւն առ մեր երկնաւոր Հայրն. մեր և նրա յարաբերութեանց մէջ եղած ամեն մի կոպիտ և կանխակալ մտքերն ու վարձկանի շահասէր հաշիւներն նա է ի բաց վտարել: Ոչ ոք, ի հարկէ, չէ համարձակուում ասել, որ Յիսուս Քրիստոս երբ և իցէ իւր աշակերտաց մէջ հպարտութեան և ինքնահաւանութեան ոգի է մնուցել ու արծարծել, մինչդեռ աղօթքի մասին նա մեզ ինչ գաղափար է ներշնչել: Նրա, Քրիստոսի, Հայեացքով մի թէ աղօթքը Հոգւոյ վսեմութիւն կամ Հոգեկան վարժութիւն է լոկ: Զէ՞ որ նա առաւելապէս այն միտքն է յայտնել թէ՛ աղօթքը ճշմարիտ և ներգործական խնդրուածք է, որ բաւարարութիւն է ստանում. թէ՛ աղօթքը ներգործում է Աստուծոյ վրայ, թէ՛ նա կարող է իրերի ընթացքը փոխել և թէ՛ նրա (աղօթքի) ոյժը, նրա ներգործութիւնը կախուած է Հաւատոյ ոյժից:

Այս միտքը անժխտելի կերպով Հաստատելու համար՝ Յիսուս Քրիստոս այնպիսի առակներ է մէջ բերում, որոնք իրանց պարզութեամբ և ակներևութեամբ մեզ զարմացնում են: Աւասիկ մեր առաջին՝ անիրաւ դատաւորը, որ զիջանում է այրիի թախանձանքին, աւասիկ մարդն, որոյ եսականութիւնը կոտրւում է բարեկամի թախանձանքը և այլն:

Ես կարծում եմ, որ աղօթքի նշանակութիւնն ու զօրութիւնը ոչ մի տեղ այնքան ուղիղ և այնքան պարզ կերպով չէ դուրս բերած քան Աւետարանում: Բացի դրանից՝ ինչ որ Յիսուս Քրիստոս սովորեցնում է Աւետարանում, նոյնը Հաստատում է և ամբողջ Սուրբ Գիրքն այնպիսի ակներևութեամբ, որ ոչ մի մեկնութեամբ չէ թուլանում: Յիշեցէ՛ք այն նշանաւոր նկարագիրն, ուր Աբրահամ կանգնած Աստուծոյ առաջ՝ միջնորդում է ինայել Սողոմոնացոյ: Մտաբերեցէ՛ք Յակոբի մարտնչիլը Հրեշտակի Հետ և նրա Իսրայել կոչուիլը, որ նշանակում է «յաղթող Աստուծոյ»: —

Այնուհետեւ՝ մի քանի դարերից յետոյ՝ նայեցէ՛ք առ ոտս Քրիստոսի կանգնած Քանանացի կնոջն, որ իւր խնդրուածքներով, իւր արտասուքներով և իւր զարմանալի Հաւատով իւր դստեր բժշկուիլը տեսաւ, — բժշկուիլ, որ, կարծես, սկզբում մերժում էր Յիսուս:

եւ այս ամենից յետոյ ապացուցէք, — եթէ կարող էք, — թէ աղօթքը՝ այնպէս ինչպէս մեզ ցոյց է տալիս Սուրբ Գիրքը՝ այնպիսի գործողութիւն չէ, որ ներգործում է ոչ թէ միմիայն մեզ վրայ, այլ նաեւ մեզանից դուրս՝ ուրիշներին վրայ, դէպքերի վրայ, աշխարհի վրայ և, Սուրբ Գրքի բառերով խօսելով, նոյն ինքն Աստուածային ողորմածութեան վրայ, որ ասաց՝ «Խնդրելէ՛ք և Բացել յիշ. և Գրիէ՛ք, Բացել յիշ. և Բացել յիշ. (Մատթ. և, 7.)։ Եւս և՛ «Երբ որ զարթ եւ՛ գիտէ՛ք որպէս Բարին որպէս որդի յիշ. և Բացել յիշ. որ յիշեն» և՛ Բացել Բարին այնպէս, որ ինչպէս զեա (անդ. եր. 11.)։

Այսպէս ուրեմն աղօթքի մասին մեզ բրիտանացիներէս վկայում է և բնութեան ձայնն և Աստուածային խօսքը։ Ել ուրիշ ի՞նչ է հարկաւոր մեզ։ Այժմ տեսնենք այն հերքումները, որոնցով կամեցան մեր հաւատը խախտել։—

Առաջինը և ամենահինը այդ հերքումներից ձեզ արդէն յայտնի է, եղբարք։ Մեզ ասում են թէ՛ «աղօթքը ճշմարիտ բան չէ, որովհետեւ նա անկարող է բնութեան օրէնքները փոխել։ Աստուած կանխօրէն սահմանել է այն՝ ինչ որ լինելու է։ Օրէնքների անխախտելիութիւնը, ասում են մեզ, գիտութիւնից արդէն ապացուցուած մի փաստ է։ Այս պատճառաւ միամտութիւն և անմտութիւն է երեւակայել, որ երկնային մոլորակներն իրանց ընթացքը կը փոխեն նրա համար՝ ինչ է թէ մեր փոքրիկ մոլորակի մի թոյլ և չնչին էակն, որ գուցէ հէնց վաղն և եթէ հող է դառնալու, այդ մասին խնդրում է Աստուծուց։ Եւ, յարակցում են, այդպիսի անխախտելի և անփոփոխելի վարք ու կանոն ոչ միայն երկնքումն է, այլ նաեւ ամենայն տեղ։ Դուք, օրինակի համար, խնդրում էք, որ բարեբար անձրեւը երաշտացած դաշտերն ոռոգէ, մինչդեռ օդերևութաբանութիւնը օր ըստ օրէ այն միտքն է հաստատում թէ անձրեւի գալն և հողմերի հոսանքը կանոնաւոր օրէնքներից է կախուած։ Դուք խնդրում էք որ մեռանող հիւանդին պահպանէ Աստուած, մինչդեռ վիճակագրութիւնը ցոյց է տալիս ծնւածներին և մեռածների անփոփոխ թուանշանները։ Այս փաստերի մասին ի՞նչ կարող էք ասել, կամ նրանցից ի՞նչ կարող էք փոխել։— Հարցնում են մեզ ինքնաբաւա-

կան կերպով և մեծ վստահութեամբ իրանց ասածների ճշմարտութեան մասին:—Նրանք խորհուրդ են տալիս թողնել աղօթքը տգէտներին և մանուկներին, որոնք կարծում են թէ երկինքը ըստեղծուած է իրանց աչքերի զմայլման համար, իսկ արեգակի գարնան գեղեցիկ օրում դուրս գալը՝ նրանց տօները զուարթացնելու համար է:

Այս տեսակ հերքումների հանդէպ թոյլ և հարկադրեալ հաւատը, ըստ երևոյթին, պէտք է որ անպատասխանի մնար, բայց եւ այդ հերքման պատասխանը հէնց իրան մէջն եմ գտնում: Դուք պնդում էք, որ բնութիւնը անփոփոխելի է, որ ես իմ աղօթքով կարող չեմ ոչ փոխել և ոչ կասեցնել իրերի ընթացքը: Արդեօք ճշմարիտ է այս: Ինչո՞ւ հապա դուք, այդպէս մտածողներդ օրինակի համար ասենք, շարժողութիւն էք անում: Ինչո՞ւ համար դուք ձեզ համար կերակուր էք պտռում: Ինչո՞ւ սերմանում էք, ինչո՞ւ շինում էք: Ձեր ամեն մի գործողութիւնը ակնյայտնի կերպով հակառակ է դուրս գալիս ձեր քարոզած վարդապետութեան: Դուք պնդում էք, թէ կարող չէք փոխել բնութիւնն և իւր օրէնքները, բայց ամենայն օր դուք նրանց փոխում էք: Դուք, օրինակի համար, քարը գետնից բարձրացնում էք, և հէնց միմիայն դրանով փոխում էք ձգտողական օրէնքն, որ նոյն քարը գետնի վրայ էր պահել: Հիւանդին և մարմնոյ արդէն գրեթէ փտտեալ անդամին դուք նոր կեանք էք պարգևում, որով հիւանդը կամ հիւանդ անդամը բոլորովին կերպարանափոխվում է, դուք ծառին պատուաստ էք կապնում, որ եթէ բնութեան իրան մնար, ոչ երբէք կարտադրէր, աշխատանքի և կեանքի գործիքների էք վերածում դուք այն կոպիտ ոյժերն, որոնք իրանք իրանց մնալով, ամեն տեղ աւեր և կործանումն կը յառաջացնէին, նոյն իսկ թոյնից դուք մի այնպիսի տարր էք հանում, որով մահուան առաջն էք առնում,—այս ամենը դուք անում էք, դուք միշտ և անդադար ազդում էք աշխարհի և մարդկանց վրայ: Կասեմ ակելին՝ դուք Կրեմլն հակառակում էք նոյն ինքն Աստուծոյն ձեր ինքնակամութեամբ և ինքնահաճութեամբ, իսկ երբ ես ուզում եմ աղօթել, դուք թուլացնում էք իմ ձգտումը՝ բնութեան անփոփոխականութիւնը իմ հանդէպ դնելով:—Արդեօք ի՞նչ իրա-

առնալով անուամ էք դուք այս: Ո՛նց, իմ ձեռքը կարող է բնութիւնը փոխել, իմ ուղեղը կարող է ստիպել կայր յոթերին իմ օգտին ծառայելու:—Ինչի՞ արդեօք իմ հոգին և եթ անզօր և զինաթափ պէտք է մնայ նրա, բնութեան, հանդէպ:—Իմ առաջ բերած փաստերը դուք հօ կարող չէք հերքել: Եւ եթէ ընդունում էք դուք այդ փաստերն, ուրեմն ձեր ճակատագրական ողջ սխտեմը քայքայվում է: Երբէք ճշմարիտ չէ այն միտքը թէ բնութիւնը անյաղթելի է և թէ մենք կարող չենք սանձել նրան: Ինձ համար Հէնց այս մէկը բաւական է, ուստի և իմ հոգիս ազատ այդ վարդապետութիւնից, — այդ հարստահարիչ և ստորացուցիչ վարդապետութիւնից, — այժմեանից և եթ կարող է աղօթել՝ միանգամայն վստահ լինելով, որ, ըստ բանից Յիսուսի Քրիստոսի, «Ամենայն ինչ հնարաւոր է այն՝ որ հրաւիրայն» (Մարկ. Թ. 23):

Ես գիտեմ մեզ ինչ կը պատասխանեն: Մեզ կ'ասեն թէ երբ մարդը ներգործում է բնութեան վրայ, նա այդ անում է տեսանելի կերպով: Իւրաքանչիւր ոք մեզնից կարող է տեսնել այդ ներգործութիւնը և թէ, ուրեմն, այդ տեսակ ակնյայտնի ներգործութեան և աղօթքի ենթադրեալ ներգործութեան մէջ ոչինչ յարաբերութիւն չկայ: Բայց բանը դրանում չէ: Հարցը, ինչպէս գիտէք, նրանումն էր, որ մարդը կարող է փոփոխել բնութեան օրէնքները: Եւ մենք տեսանք, որ նա այդ անում է: Հիմա ինձ պնդում են՝ անկարելի է հասկանալ թէ բնութեան օրինաց փոփոխումը ի՞նչ ձևով է կատարվում աղօթքի ազդեցութեամբ:—

Բայց սակայն միթէ՞ քիչ բաներ կան բնութեան մէջ, որոնք մեզ համար միանգամայն անհասկանալի են և անվճռելի: Մի՞թէ պարզ է և հասկանալի, զոր օրինակ, թէ կամքն, որ հոգեկան զօրութիւն է, ի՞նչպէս կարող է ներգործել նիւթի, իրի վրայ: Մի՞թէ դուք գիտէք թէ իմ ձեռքը ի՞նչ ձևով է հնազանդում իմ մտքին:—Այս աշխարհիս երեսին՝ ամեն տեղ գաղտնիքները մեզ չեն շրջապատած արդեօք: Եւ ամենից լուսաւորեալները սովորական մահանացունքից մի՞թէ աւելի շատ բան գիտեն այդ գաղտնիքների մասին: Երբեմն հոդադործը սերմը իւր դաշտի մէջն է ձգում՝ արդեօք նա գիտէ՞ թէ այդ սերմը որպիսի՞ գործողութեամբ ծիլ է հանում և թէ՞ ո՞ր գաղտնի

զօրութեամբ փտտած սերմիցը կեանք, — կենդանի և նոր սերմ է ստացվում: Հողագործը այդ բանը չգիտէ նոյնքան, որքան չգիտէք էւ դուք, որքան և չգիտեն ամենից լուսաւորեալ մարդիկն անգամ: Այնու ամենայնիւ՝ Հողագործը հաւատում և յանձնում է իւր սերմը Հողին: —

Ես ինքս նոյնպէս չգիտեմ թէ իմ աղօթքը ի՞նչպէս է ներգործում, և այդ թողնում եմ Աստուծոյ կամբին: Բայց ես աղօթում եմ լի հաւատով, որ այս Հոգեկան սերմը կը գտնի իւր դաշտը, և յաւիտենականութեան համար ծիլ կարձակէ:

Մի ուրիշ հերքում ևս դնում են մեր Հանդէպ՝ երբ մենք ասում ենք թէ՝ աղօթքի միջոցաւ մենք կարող ենք իրերի ընթացքը փոխել և Աստուծոյ ողորմութիւնը ձեռք բերել: Այդ նշանակում է, ասում են, կասկածիլ Աստուծոյ իմաստութեան և ողորմածութեան վրայ: Եւ ինչպէս գոռոզութեամբ նրան յատկացեալ գործերը մեզ ենթարկել, և թէ, — ասում են, — այս դէպքում մեզ ուրիշ ոչ մի բան հարկաւոր չէ անել՝ եթէ ոչ հնազանդութեամբ համբերել և ակնկալել նրա կամացը:

Այս հերքումից դուրս ձգենք այն ամենը, ինչ որ մեզ ճշմարտանման է երևում: Երբոր մենք ասում ենք թէ՝ մարդ իւր աղօթքով կարող է Աստուծոյ ողորմածութիւնը գրաւել, — դրանով մենք կամենում ենք մարդկային լիզուով արտայայտել այն, ինչ որ մեր հասկացողութիւնից բարձր է, վասն զի մեր կամքը, ի հարկէ որ, անգոր է Աստուածային կամքը իրան ենթարկելու և թէ վերջին խօսքը և վրձիւր դարձեալ Աստուծոյն իրան է վերապահուած: —

Այսպիսով, նկատում ենք մենք, մեր Հանդէպ դրած այս հերքումին ևս, առաջինի նման, ինքն իրան քանդվում է արդէն: — Մեզ ասում են թէ Աստուծոյ իմաստութիւնն ու ողորմածութիւնը մեզ չպէտք է տեղիք տայ դիմել նրան մեր խնդրուածքներով: Բայց ի՞նչ պատասխան կտաք այն մարդուն, որ և մի և նոյն սկզբունքի անուամբ, կրկնի մարդկային աշխատանքը հերքել, «դուք աշխատում էք, դուք մշակում էք, ասում է նա ձեզ, բայց դա չէ՞ նշանակում արդեօք որ դրանով դուք կասկածում էք նրա առ ձեզ ունեցած խնամոց վրայ: Դա չէ՞ նշանակում արդեօք, որ դուք ուզում էք

Աստուծոյ գործը փոխարինել ձեր գործին: Աստուած բարի է. անշուշտ Նա ուզում է, որ դուք ապրիք: Թողէք ուրեմն որ ձեր ապրուստի մասին Նա ինքը հոգայ:—Այսպիսի հարցման ինչ պատասխան պէտք է տալ, եղբայրք: Ահա ինչ. «ի հարկէ Աստուած կամենում է, որ ես ապրիմ. բայց Նա կամենում է, որ ես ապրիմ աշխատանքով: Ապա թէ ոչ՝ ինչի՞նչ Նա իմ մէջ աշխատութեան ձգտում կը ձգէր, իսկ եթէ ես այդ ձգտման չհետեւիմ»,—այն ժամանակ Նրա կամքը, ինչքան էլ որ բարի լինի դէպի ինձ, —ինձ վերաբերութեամբ չի իրագործուիլ:—Ինձանից և իմ աշխատութիւնիցն է կախուած Աստուծոյ կամքի կատարումը:—Ինձ թվում է, որ այս պատասխանի ընդդէմ ոչինչ չէ կարելի ասել: Աղօթքի վերաբերութեամբ ևս նոյնը կարելի է ասել, ինչ որ աշխատութեան: Այո, Աստուծոյ կամքն այն է, որ այս ինչ նպատակը և Նրա հետեւանքը տեղի ունենայ, լինի: Բայց առ այդ Նա մի պայման է դրել, հոգւոյ աշխատանքը, այն է՝ աղօթքը:—Եթէ որ ես չաղօթեմ, Աստուածային կամքը՝ վերաբերութեամբ ինձ՝ չի կատարուիլ: Եթէ որ չաղօթեմ, Աստուծոյ օրհնութիւնը չի իջնիլ իմ մերձականերիս վրայ, մարդկանց վրայ, աշխարհի վրայ: Եթէ որ ես չաղօթեմ, անբաղդութիւններն ու պատահարները անպակաս կը լինեն իմ գլխից: Աղօթելով միթէ ես յանդգնում եմ Աստուածանից իմաստուն լինել և կամ Նրա կամքը իմ կամաց համեմատ փոփոխել: Սա մի անմիտ և սարսափելի ենթադրութիւն կը լինէր:—Ո՛չ, ընդհակառակը, աղօթելով ես միայն ուզում եմ Նրա կամքը կատարած լինել, Նրա ցանկութեանը պատասխանել և Նրա Աստուածային նախասահմանութեանը նպաստել: Եւ իմ ամենամեծ փառքը հէնց սրանումն է կայանում:—

Այժմ մեզ մնում է, եղբայրք, հերքել և մի այլ կարծիք՝ որ ամենից առաւել տարածուած է և առաւել գործածական:—Այդ կարծիքը, ասում են մեզ, փորձառութիւնից է ծագած: «Եթէ որ»—ասում են, աղօթքը, յիշաւի՜ ներգործէր և ազդէր ուրիշի վրայ, դէպքերի վրայ, համաշխարհային կարգ ու կանոնների վրայ,—այն ժամանակ հետեւանքը ամէնքի համար աշխարայ կը լինէր: Բայց ո՞վ է տեսել ցարդ այդ հետեւանքը: Միթէ՜ ամենից աւելի հաւատացեալը՝ ուրիշներին պա-

կան ենթակայ է դժբաղդութեանց և փորձութեանց: Մահուան հրեշտակը միթէ նրա տան կողքից անց է կենում՝ խնայելով նրա անդրանկին, ինչպէս պատահեցաւ այդ հրէաներին Եգիպտոսում:—Նոյն փորձութիւններն ու դժբաղդութիւնները՝ միթէ՞ չեն մերձենում նոյն իսկ Աստուծոյ իրան սիրելիներին: Աղօթքի մրմունջները մենք լսում ենք, բայց նրանց պատասխանը արդեօք տեսնում ենք:—Ո՛հ, քրիստոնեայք, դուք զոհ էք մի վեհանձն մոլորութեան: Մինչև այժմ ձեր Աստուածը ձեզ համար ի՞նչ է արել:—

Այսպիսի ճառերը, եղբայք, ձեզ արդէն ծանօթ են. քանի՞ քանիցս անգամ դուք լսած էք նրանց:—

Քանիցս անգամ սկեպտիկները օգտուել են այդ ճառերով՝ իրանց նուրբ հեգնութիւններով աղօթողներին ծաղրելու համար:—

Քանիցս անգամ, շատ կարելի է, այս տարակուսանքները ազդել են ձեր փափուկ հոգւոյ վրայ և խախտել ձեր անկեղծ հաւատը և յոյսը, որ ունէիք Աստուծոյ վրայ:—Բայց այն մարդիկն, որոնք սովոր են աղօթքի հետեւանքի մասին այդ տեսակ դատողութիւններ անել, արդեօք աղօթքի հետեւանքների ի՞նչ լինելը իսկապէս կարող ես հասկանալ և ըմբռնել: Նրանք գիտե՞ն արդեօք, թէ մարդկանց աղօթքն ո՞ր աստիճան անկեղծ է և սրտաբուղիս:

Այդ մարդիկը զարմանում և հիասթափվում են չտեսնելով աղօթքի ակնյայտին ներգործութիւնը, բայց նախ և առաջ հարկաւոր էր իմանալ թէ այդ աղօթքներն արդեօք հասնո՞ւմ են Աստուծոյ ականջին: Ի՞նչ կասէք դուք այն աղօթքների համար, որոնք թէպէտ դուրսից են մարդկանց եսականութիւնից, յանցանքներից, մեղքերից և կրքերից:

Այսպէս, ուրեմն եղբայրք, աղօթքի ներգործութեան մասին որ և է գնահատութիւն անելուց առաջ՝ հարկաւոր է քննել աղօթքի էութիւնը ինքն ըստ ինքեան:—

Բայց մարդկային ո՞ր աչքը կարող է որոշել աղօթքների իսկական յարգն ու արժէքը: Աղանդաւորը՝ որ իրան վարդապետութեան տարածման համար է խնդրում՝ միմիայն ինքն իրան համար է մտածում, իւր մտքերի և իւր կուսակիցների յառաջադիմութեան համար է աղօթում: Հայրը՝ որ իւր զաւակաց համար է աղօթում՝ մի-

Միայն նրանց երկրաւոր բաղդաւորութիւնն աչքի առաջ ունի և ինքնահաճ մեծամտութեամբ նրանց փառաւոր ապագայովն և եթէ զբաղուած: Վշտացած մարդը՝ որ ցարդ Աստուծոյ մասին մոռածել անգամ չէր ուզում և գուցէ Հէնց վաղիւ և եթ պատրաստ էր նրան մոռանալ, ուրանալ, — այժմ Աստուծոյ գոյութիւնը յիշում է յատկապէս այն նպատակաւ, որ նրանից մի բան խնդրէ՝ և ստանայ ի յագուրդ իւր եսականութեան: Այդ մարդն, առանց բնաւ ուշք դարձնելու ուրիշներէ դժբաղդութեանց վրայ և առանց նրանց մասին հոգալու, կարծում է, որ Աստուծոյ ողորմութեանը արժանանալու արտօնեալ և ընտրեալն ինքն է միմիայն, — Մեղսալից և ապականուած մարդը, որ խնդրում է ազատել իրան փորձութիւնից, բայց որ իւր սրտի խորքում մի յանցաւոր նպատակ ունի, — արդեօք այս տեսակ մարդիկը ի՞նչպէս և ճշմարտապէս են աղօթում: Հետեւաբար ի՞նչ զարմացք, եթէ որ նրանց այնքան աղօթքներն ապարդիւն են անցնում: Կրկնում եմ նորից՝ Աստուածային շաւղաց մասին դատելը՝ արդեօք մե՞ր գործն է միթէ: —

Ահա թէ ամեն բանից առաջ մենք ինչ պէտք է յիշենք և իմանանք և ոչ թէ՝ այնքան կարճատեսութեամբ Աստուծոյ ճանապարհները քննեն: Այժմ աւելի մօտիկից նայենք մեր Հանդէպ դրած կարծիքի վրայ: —

Մեզ մասնանիշ են լինում աղօթքների վրայ, որոնք եղած են լի հաւատով, երկիւղածութեամբ և հնազանդութեամբ, բայց և որոց արդիւնքը չի տեսնուի, և ասում են այդ ամէնից յետոյ՝ միանգամայն անհնարին է պնդել թէ աղօթքը ներգործում է: Թող ասենք այդպէս լինի:

Բայց փորձութեան այդ փառտի պատասխանը դարձեալ փորձառութիւնը ինքն է տալի: —

Ես դիմում եմ այն անձանց, որոնք գիտեն աղօթել և որոնք, ուրեմն, ամենալաւ դատաւորներ կարող են լինել ներկայ Հանգամանքում, դիմում եմ այդ անձանց վստահութեամբ, քաջ գիտենալով, որ նրանք զրաւանորէն կը հաստատեն աղօթքի ներգործութիւնը: Նոյն իսկ այս տաճարիս մէջ, ինչպէս և ամեն տեղ երկրադնդիս վրայ ուր հաւատացեալները ժողովում են, ուր Աստուծոյն իբրև մեր

Հայրն են ընդունում, — ամեն տեղ և ամեն դեպք մի և նոյն պատասխանը կը լսենք: — Այդ պատասխանը չէ՞ որ փորձառութեան վրայ է հիմնուած նոյնպէս: — Զանազան սեռի և բնաւորութեան այս բազմաթիւ հաւատացեալների մէջ, որոց թուում կարող են գտնուիլ անշուտ սուրբ և մաքուր հոգիներ, — կեղծիքից, շողոքորթութիւնից և ստախոսութիւնից զերծ ու ազատ և ճշմարտութիւնը ամեն բանից նախադասող հոգիներ, — և նրանք բոլորը միաձայն մեզ կասեն՝ «այո՛, աղօթքը ներգործում է, և մենք բոլորս ողջ աշխարհի առաջ պատրաստ ենք վկայել այդ բանը»: —

Սակայն աղօթքի ներգործութեան տեսանելի փաստ ու հետեանքներն ևս կան: Եւ այդ հետեանքներն այն աստիճան ակնյայտն են, որ հազիւ թէ որ և է անձն կարողանայ ժխտել նրանց: Եթէ որ մենք տեսնէինք թէ ինչպէս, մեզանից 40 դար առաջ, Քաղդէայի հովիտներում՝ աննշան և անյայտ մի ցեղի աննշան և անյայտ պետը, գլուխը՝ Եհովայի առաջ ծուներ էր դնում և նրա անունն էր կանչում յօգնութիւն իւր զաւակին միանգամայն հաւատալով, որ երկրային բոլոր ազգերը նրա — Եհովայի — անունով պիտի օրհնուին. եթէ որ, մեզանից 2000 տարի առաջ, մենք լսէինք Սիծի վերնատան մեջ ժողովուած մի բուռ Քալիլիացիների աղօթքը, որոնք հաստատ մտքերումը դրած էին և գիտէին, որ ողջ աշխարհը պիտի փրկուի այն հաւատով, որոյ վկաններն իրանք եղան, — այն ժամանակ մենք պատրաստ էինք ժպտել թէ՛ Աբրահամի և թէ՛ Քրիստոսի առաջին աշակերտների աղօթքների վրայ: Իսկ այժմ. այժմ ո՞վ կը համարձակի ասել թէ Աբրահամն ու Քրիստոսի աշակերտները սխալուած, մոլորուած են եղել:

Զէ՞ որ այժմ մարդկութեան մէկ երրորդ մասը Աբրահամին հաւատոյ Հայր է ընդունում, իսկ առաքեալների աղօթքը կրկնվում է աշխարհիս ամեն մի ծայրում հետզհետէ աւելացող եկեղեցիների մէջ:

Իայց մի բան կայ. եթէ որ ամբողջ դարերը տեսնող ու ըմբռնող աչքի համար հաւատոյ յաղթանակները աշկարայ են, նոյնը չէ՞ կարելի ասել, հարկաւ, սովորական կեանքի վերաբերութեամբ: Այստեղ աղօթքի ներգործութիւնը, գրեթէ միշտ, թագնուած է: Այդ

ներգործութիւնը միմիայն հոգւոյ աչքերով է տեսանելի։ Ըստ արտաքին երևոյթին՝ հաւատացեալի վիճակը ոչինչ բանով անհաւատի վիճակից չէ որոշվում։ Մի և նոյն բաղդին վիճակում են ամենքն էլ (Յայտ. Բ. 14), ասում է Յայտնութեան հեղինակը։ Մի և նոյն դժբաղդ դէպքը, մի և նոյն կարծեցեալ ճակատագիրը խորտակում է եւ աղօթողին եւ հայհոյիին։ Այս բանը մեզ զարմացնում և շփոթում է, բայց սակայն ես ձեզ հարցնում եմ, եղբարք, միթէ ուրիշ կերպ կարո՞ղ էր լինել։

Դուք ուզում էիք, որ աղօթքը տեսանելի կերպով ներգործէ և իւր, այսպէս ասած, ակնյայտնութեամբ փարատէ ամեն մի տարակուսանք։ Բայց այն ժամանակ ի՞նչ գին կունենար արդեօք աղօթքը։ Դուք խնդրելիս կը լինէիք փրկել ձեզ հիւանդութիւնից և փորձութիւնից և ձեր խնդրուածքը իսկոյն և եթէ կատարուած լինէր, վիշտ ու տառապանքներն ստուերի նման հեռանային ձեզանից և ձեր հարթած ճանապարհից անհետանային ամեն անհարթութիւնք և թշուառութիւնք։ Հէնց որ ձեր մէջ որ և է ցանկութիւն ծագեցաւ՝ իսկոյն և եթէ և ակնյայտի կերպով նրա իրագործումը տեսնէիք։ Բայց դուք չէք հասկանում, որ եթէ այդ այդպէս լինէր, այն ժամանակ ամեն մարդ էլ կցանկանար ձեզ նման քրիստոնեայ լինել և ձեզ նման աղօթել։

Սակայն այդ ձևով քրիստոնեայ լինելն ու աղօթելն՝ արդեօք սիրելի՞նք, առաջ կուգար։ Ի հարկէ ոչ, այլ շատ պարզ և հասկանալի օգուտից և շահասիրութիւնից, վասն զի ի՞նչպէս չաղօթել այն Աստուծոյն, որ իսկոյն և եթէ լսում և կատարում է ձեր խնդրուածքը և իւր ընտրեալներին շրջապատում է անյապաղ և աշկարայ ինամահալութեամբ։

Եկէ՛ք, ո՞վ շահասէրներ, եկէ՛ք օգուտի՝ քամակից մանեկող ճարպիկներ, եկէ՛ք և ծունր դրէ՛ք, երկնքում ձեզ վարձ է սպասում, իսկ մինչև այդ օրը—ամեն տեսակ բարեբաղդութիւնք այս երկրիս վրայ։

Այլ ևս չկան ո՛չ տառապանք և ո՛չ զրկանք։ Այո՛, դուք այս բաներն էիք ուզում, բայց Աստուած այդ չէ կամենում։—Նա իւր հատացեալներին երբէք տեսանելի փրկութիւն չխոստացաւ, այլ նա

միայն ասաց, թէ նրանք այժմ պէտք է հալածուին կրկնակի կերպով թէ՛ իբրեւ մարտիկ և թէ՛ իբրեւ քրիստոնեայք (Բ. Տիմոթ. Գ. 12): Ըստ երեւոյթին Աստուած իւր հաւատացեալներին ևս ձգել է հանդամանքների ձեռքն և միւս մահկանացուներից նրանք ոչնչով չեն տարբերվում:

Հաւատացեալներն ևս միւսների նման, մանաւանդ թէ նրանցից էլ առաւել, ենթակայ են ճշման, հալածման և մահուան: Բայց այդ պմենի տակ նրանք զգում և տեսնում են Աստուծոյ աջը: Հաւատով պայծառացած՝ նրանք Հաստատ քայլերով առաջ են ընթանում: Եւ ահա հէնց այդ խիստ կարգապահութեան ներքոյ՝ արծարծվում և մշակվում է ամենալսեմ և ամենազեղեցիկ բանը այս աշխարհում, այն է՝ սէրը: Սէրը՝ որ Աստուծոյն է նուիրվում առանց որ և է անձնական շահի: սէրը՝ որ Աստուծոյն է նուիրադործում իւր բոլոր բաղդը, իւր հանդատութիւնը, իւր ուրախութիւնը և որը ամենաբարձր անձնազոհութեան ևս կարող է հասնել:

Անագորոյն բաղդ. Հիւանդոտ կրթութիւն:

Բայց մի մոռանաք, որ հէնց այդ ազդեցութեան տակ մարդիկ կը սովորեն Աստուածային սիրոյ ներգործութիւնը ճանաչել և ըմբռնել: Սկզբում մեզ թվում էր, որ մեր աղօթելն ապարդիւն գործ է, թէ մեր աղօթքն Աստուած չէ լսում: Յետոյ մենք տեսանք, որ նա լսում է՝ միայն իւր ուզածին նման, այլ ոչ թէ այնպէս, ինչպէս մենք երեւակայում էինք, թէ նա մեզ համար մի լաւ բան է պատրաստել. աւելի լաւ բան, քան մեր խնդրածը: Ո՛հ, եղբարք իմ, դուք, որոց Աստուած աղքատութիւնն է վիճակել և դուք, որ լաւ գիտէք թէ որպիսի դժբաղդութեամբ է ձեռք բերվում հացի չոր ու ցամաք կտորը, արդեօք ձեզ չէ՞ պատահած վշտանալ, երբ մի մանուկ, մի զաւակ ձեզ մօտենալով միամիտ վստահութեամբ խնդրել է ձեզանից մի բան, որը ձեռք բերելու համար նիւթական առանձին միջոցներ են հարկաւոր: Այդ ժամանակ դուք, ցաւ ի վիշտ, չէք մտածել արդեօք թէ ինչի այդ խեղճ մանուկն ևս չունի այն, ինչ որ միւս շատերն ունին: Անհաւասարութեան այդ դառը միտքը՝ ինչո՞ւ արդեօք այդպէս շուտ պէտք է ճնշէ և սառեցնէ նրա սիրտը:—Նա ապարելի է, որ դուք պատրաստ էիք զիջանիլ այդ մանկան խնդրոյն, բայց առ

այդ դուք թոյլ և անկարող գտնուեցաք: վասն զի կատարելով մանկան ցանկութիւնը, դուք նրա քմահաճութիւնը կը գոհացնէիք, նրա կրքերը կարծարծէիք և կեանքի կռուի նկատմամբ՝ նրան վատ դատուած կը լինէիք: Ուստի և մերժում էք մանկան՝ չնայած որ դրանով նրան վշտացնում, գրգռում և նրա սիրտը ձեզանից սառեցնում էք:

Աստուած էլ Հէնց մի և նոյն այս կերպովն է վարվում մեզ հետ: Մեր վերաբերութեամբ՝ նրա ցոյց տուած անբացատրելի լուսթեան ներքոյ՝ մի հայրական և սրբազան կամք է ծածկուած, որ մեզ նախապատրաստում է երկնքի համար: Ուրեմն էլ մի ասէք թէ ձեր աղօթքը առանց հետեանքի մնաց: Ոչ, ընդ հակառակը, նա ներգործեց, բայց ոչ ձեր ցանկութեան համեմատ: Նա գրաւեց և իջեցրեց ձեր և ձեր սիրածների վրայ աւելի լաւ օրհնութիւն և ողորմութիւն քան ինչ որ դուք կարծում էիք: Ռուք էրկրային երջանկութիւն էիք երազում: Աստուած ձեզ ուրիշ պատկ տուեց, դուք փրկութիւն էիք ցանկանում, Աստուած ձեզ փորձութիւն ուղարկեց, որ սրբեց և մաքրեց ձեզ: Ինչ էլ որ լինի ձեր աղօթքը հասաւ Աստուծոյ ականջին, տեսանելի թէ անտեսանելի կերպով, դա մի և նոյնն է: Միայն թէ դուք նրա (ձեր աղօթքի) պատասխանը ստացաք: Երբ և իցէ, վաղ կամ ուշ, դուք կիմանաք այդ պատասխանի ինչ լինելը և կօրհնէք ձեր հաւատարմութիւնը և առ Աստուած անձնատուր լինելը: Ամէն:

Թարգմ. ԵՂԻՇԵՅ ԳԱՀ. ԳԵՂԱՄԵԱՆՑ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՏԻԳՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱ ՎԵՐԱՑ.

Ներկայ դարիս մեծ նկարիչներից մէկը իւր նշանաւոր «Միլիարէլ Բրիտան» պատկերում զեղեցիկ կերպով ներկայացրեց մեր Փրկիչ